ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության Գերագույն Խորհրդի եւ Սիրիայի Արաբական Հանրապետության Ժողովի միջեւ համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը եւ Սիրիայի Արաբական Հանրապետության Ժողովրդական ժողովը, հետագայում անվանվող «Կողմեր»

ընդունելով Հայաստանի եւ Սիրիայի բարեկամության ու համագործակցության ավանդական հարաբերությունների հետագա զարգացման կարեւոր նշանակությունը,

նշելով երկու երկրների միջեւ խորհրդարանական համագործակցության կարեւորությունը բարեկամական եւ փոխշահավետ կապերի զարգացման համար,

ձգտելով աջակցել երկու պետությունների միջեւ քաղաքական, առեւտրատնտեսական, գիտատեխնիկական եւ մշակութային համագործակցությանը,

ղեկավարվելով Կողմերի բարիդրացիության, իրավունքների ու շահերի հարգման սկզբունքներով,

պայմանավորվեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդում ստեղծել Սիրիայի Արաբական Հանրապետության Ժողովրդական ժողովի հետ կապերի պատգամավորական խումբ, Սիրիայի Արաբական Հանրապետության Ժողովրդական ժողովում ստեղծել Հայաստանի հանրապետության Գերագույն խորհրդի հետ կապերի պատգամավորական խումբ:

Հոդված 2. Խորհրդարանական խմբերի միջեւ պարբերաբար անցկացնել խորհրդատվություններ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող միջազգային եւ տարածաշրջանային հիմնահարցերի վերաբերյալ:

Հոդված 3. Խորհրդատվությունների անցկացման ժամկետները, ինչպես նաեւ դրանց մակարդակը եւ քննարկման դրվող հարցերը Կողմերը սահմանում են նախապես:

Հոդված 4. Կազմակերպել համագործակցություն խորհրդարանական մշտական հանձնաժողովների միջեւ, որի համար, ըստ անհրաժեշտության, ստեղծել համատեղ աշխատանքային եւ փորձագիտական խմբեր:

Կատարված է Դամասկոս քաղաքում, 1993 թ. դեկտեմբերի -ին, երկու օրինակով, յուրաքանչյուրը հայերեն եւ արաբերեն, ընդ որում, երկու բնագրերն ունեն միատեսակ ուժ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ՝	ՍԻՐԻԱՅԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ՝
Բ.ԱՐԱՐՔՑՅԱՆ	Ա.ՔԱԴԴՈՒՐԱ